«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության երևանյան ընտրական փուլ

**Կազմակերպիչը՝** Հայաստանի շախմատի ֆեդերացիա

**Անցկացման վայրը՝** Հայաստանի շախմատի ակադեմիա /հասցե՝ ք. Երևան, Շչեճն 34/:

**Ժամկետները՝** փետրվարի 14-ից 22-ը 2026թ.

Մինչև **8** տարեկան տղաներ և մինչև **10** տարեկան աղջիկներ

| **Ամսաթիվ** | **Խաղափուլ** | **Ժամ** |
|---|---|---|
| 14 փետրվարի | 1-ին տուր | 13:00 |
| 15 փետրվարի | 2-րդ տուր | 13:00 |
| 16 փետրվարի | 3-րդ տուր | 13:00 |
| 17 փետրվարի | 4-րդ տուր | 13:00 |
| 18 փետրվարի | 5-րդ տուր | 13:00 |
| 19 փետրվարի | 6-րդ տուր | 13:00 |
| 20 փետրվարի | 7-րդ տուր | 13:00 |
| 21 փետրվարի | 8-րդ տուր | 13:00 |
| 22 փետրվարի | 9-րդ տուր | 13:00 |

Մինչև **10, 12, 14, 16** տարեկան տղաներ և մինչև **12** տարեկան աղջիկներ

| **Ամսաթիվ** | **Խաղափուլ** | **Ժամ** |
|---|---|---|
| 14 փետրվարի | 1-ին տուր | 15:30 |
| 15 փետրվարի | 2-րդ տուր | 15:30 |
| 16 փետրվարի | 3-րդ տուր | 15:30 |
| 17 փետրվարի | 4-րդ տուր | 15:30 |
| 18 փետրվարի | 5-րդ տուր | 15:30 |
| 19 փետրվարի | 6-րդ տուր | 15:30 |
| 20 փետրվարի | 7-րդ տուր | 15:30 |
| 21 փետրվարի | 8-րդ տուր | 15:30 |
| 22 փետրվարի | 9-րդ տուր | 15:30 |

**Ժամակարգը՝** մինչև 8տ. տղաներ և մինչև 10տ. աղջիկներ՝ 60-ական րոպե մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած 1-ին քայլից: Մինչև 10, 12, 14, 16 տ. տղաներ և մինչև 12տ. աղջիկներ՝ 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած 1-ին քայլից:

Խաղի մեկնարկից 30 րոպեից ավել ուշացած մասնակցին կգրանցվի պարտություն և տվյալ մասնակիցը՝ որպես անհարգելի բացակա, կհեռացվի մրցաշարից:

**Մուտքավճարը՝** 4000 ՀՀ դրամ

**Մասնակիցներ՝**

***<u>Մինչև 8 տարեկան տղաների մրցաշար</u>***

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 4-րդ և 3-րդ մարզական կարգ ունեցող այն շախմատիստները, ովքեր ծնվել են 2017թ. դեկտեմբերի 31-ից հետո:

2-րդ, 1-ին մարզական կարգ և վարկանիշ ունեցող շախմատիստները մասնակցում են հաջորդ փուլին:

1-ից 25-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2026թ. մինչև 8 տարեկան տղաների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***<u>Մինչև 10 տարեկան տղաների մրցաշար</u>***

Մասնակցելու իրավունք ունեն միայն 3-րդ և 2-րդ մարզական կարգ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2015թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ին մարզական կարգ ունեցող շախմատիստները մասնակցում են հաջորդ փուլին:

1-ից 30-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2026թ. մինչև 10 տարեկան տղաների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***<u>Մինչև 12 տարեկան տղաների մրցաշար</u>***

Մասնակցելու իրավունք ունեն միայն 2-րդ, 1-ին կարգ և մինչև 2025 ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2013թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 20-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2026թ. մինչև 12 տարեկան տղաների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***<u>Մինչև 14 տարեկան տղաների մրցաշար</u>***

Մասնակցելու իրավունք ունեն միայն 1-ին կարգ և մինչև 2075 ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2011թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 18-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2026թ. մինչև 14 տարեկան տղաների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***<u>Մինչև 16 տարեկան տղաների մրցաշար</u>***

Մասնակցելու իրավունք ունեն միայն 1-ին կարգ և մինչև 2100 ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2009թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 6-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2026թ. մինչև 16 տարեկան տղաների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***<u>Մինչև 10 տարեկան աղջիկների մրցաշար</u>***

Մասնակցելու իրավունք ունեն միայն 4-րդ և 3-րդ կարգային շախմատիստուհիները, ովքեր ծնվել են 2015թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 20-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստուհիները իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2026թ. մինչև 10 տարեկան աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***<u>Մինչև 12 տարեկան աղջիկների մրցաշար</u>***

Մասնակցելու իրավունք ունեն միայն 3-րդ և 2-րդ կարգային շախմատիստուհիները, ովքեր ծնվել են 2013թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 16-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստուհիները իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2026թ. մինչև 12 տարեկան աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***<u>Լրացուցիչ ցուցանիշներ</u>***՝

Հավասար միավորներ ունենալու դեպքում տեղերը կորոշվեն ըստ՝

1. Հատված բուխհոլցի
2. Բուխհոլցի
3. Անձնական հանդիպման արդյունքի
4. Սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի

*Մինչև 12, 14 և 16 տարեկան տղաների խմբերում հաշվարկվելու է ազգային վարկանիշ:*

Ընտրական բոլոր մրցաշարերում **արգելվում է** այն շախմատիստների մասնակցությունը, ովքեր որևէ տարիքային խմբում Հայաստանի առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության անհատական իրավունք ունեն:

Մարզադպրոցների հայտերը ուղարկել info@chessfed.am էլեկտրոնային հասցեին՝ ըստ կանոնադրությանը կից ձևաչափի:

Հայաստանի պատանիների առաջնության երևանյան ընտրական փուլի մասնակիցների հայտերը ներկայացնելու **վերջնաժամկետն է 2026թ. փետրվարի 11-ը ժամը 18:00-ն:**

Գրանցվել կարող եք նաև այցելելով Հայաստանի շախմատի ֆեդերացիայի պաշտոնական կայք, գրանցվել բաժին կամ հետևյալ հղումով.

www.chessfed.am/am/tournaments/registration

Գրանցումը բանկային փոխանցման դեպքում կատարվում է հետևյալ հաշվեհամարին՝

ՍՏԱՑՈՂ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ

ՀՎՀՀ՝ 01515033

ԲԱՆԿ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»

Հ/Հ՝ 1510002020290100

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարի անվանումը, մասնակցի անուն, ազգանուն, հայրանունը, ծննդյան տվյալները, կարգը/վարկանիշը, տարիքային խումբը, հեռախոսահամարը:

Հարցերի դեպքում զանգահարել՝ +374 99/10 440105:

Գլխավոր մրցավար

Միջազգային մրցավար Գևորգ Մուրադյան